ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.08.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/115

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Իզոռուֆ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/28» ծածկագրով գնանշման հարցում, շինանյութերի և տնտեսական ապրանքների ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 09.07.2019թ.-ի թիվ /26/-11399-2019 գրությամբ «Իզոռուֆ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 25.06.2019թ.-ի թիվ ՊՆ/02/994-2019 գրության հիման վրա, 09.07.2019թ.-ին «Իզոռուֆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 09.07.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 18.07.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 18.07.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 08.08.2019թ.-ին:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 25.06.2019թ.-ի թիվ ՊՆ/02/994-2019 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/28» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգում 42-րդ չափաբաժնի մասով «Իզոռուֆ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: Սահմանված կարգով «Իզոռուֆ» ՍՊԸ-ն (www.armeps.am) համակարգի ոչ ավտոմատ ծանուցումների միջոցով ծանուցվել է երեք (3) աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

«Իզոռուֆ» ՍՊԸ-ի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը չեն ներկայացվել օրենսդրությամբ սահմանված ժամկետում:

Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը, որոշեց 42-րդ չափաբաժնի մասով «Իզոռուֆ» ՍՊԸ-ի հայտը մերժել:»:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, ներկայացրել են թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/28» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Իզոռուֆ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք կցվել են ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությանը:

3. <u>«Իզոռուֆ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 09.07.2019թ.-ին գրությամբ դիմել է «Իզոռուֆ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.07.2019թ.-ի թիվ /26/-11399-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր կարծիքը:

Ընկերությունը ներկայացնելով գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար <<ՀՀ ՊՆ կարիքների համար շինանյութերի և տնտեսական ապրանքների>> ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին ի թիվս այլ ընկերությունների, հայտ է ներկայացրել նաև «Իզոռուֆ» ՍՊԸ-ն և 42-րդ չափաբաժնի մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

«Իզոռուֆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում որպես մասնակից նշված է՝ «Իզոռուֆ» ՍՊԸ և Ընկերության էլ. փոստի հասցե նշված է՝ isoroof_am@yahoo.com:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.05.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 4.2 կետի համաձայն՝ որոշվեց հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցնող մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Իսկ արդեն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.06.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ 31.05.2019թ. գնումների համակարգող Մ. Ամիրյանը Armeps.am համակարգի միջոցով ծանուցեց առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին հրավերով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի

հրավերի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը՝ m.amiryan@mil.am էլեկտրոնային հասցեին: Սահմանված ժամկետում բոլոր ծանուցված մասնակիցները ուղարկել են վերը նշված փաստաթղթերը՝ բացառությամբ <<ՄԷՄԱ>> ՍՊԸ-ի և «Իզոռուֆ» ՍՊԸ-ի: Արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից <<ՄԷՄԱ>> ՍՊԸ-ի և «Իզոռուֆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը մերժվեցին:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ինչպես արդեն հայտնել ենք, ՀՀ պաշտպանության նախարարության համար <<ՀՀ ՊՆ կարիքների համար շինանյութերի և տնտեսական ապրանքների>> ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին ի թիվս այլ ընկերությունների, հայտ է ներկայացրել նաև «Իզոռուֆ» ՍՊԸ-ն և 42-րդ չափաբաժնի մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

«Իզոռուֆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում որպես մասնակից նշված է՝ «Իզոռուֆ» ՍՊԸ և Ընկերության էլ. փոստի հասցե նշված է՝ isoroof_am@yahoo.com:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.05.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 4.2 կետի համաձայն՝ որոշվեց հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցնող մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.06.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ 31.05.2019թ. գնումների համակարգող Մ. Ամիրյանը Armeps.am համակարգի միջոցով ծանուցեց առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին հրավերով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը՝ m.amiryan@mil.am էլեկտրոնային

հասցեին: Սահմանված ժամկետում բոլոր ծանուցված մասնակիցները ուղարկել են վերը նշված փաստաթղթերը՝ բացառությամբ <<ՄԷՄԱ>> ՍՊԸ-ի և «Իզոռուֆ» ՍՊԸ-ի: Արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից <<ՄԷՄԱ>> ՍՊԸ-ի և «Իզոռուֆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը մերժվեցին:

Գնումների հետ կապված բողոքը քննող անձին տեղեկացնում ենք, որ Ընկերությունը <<armeps>> էլեկտրոնային համակարգում մշտապես աշխատել է այլ էլ. հասցեով, սակայն կապված պետական գնումները էլեկտրոնային աճուրդի միջոցով իրականացնելու որոշումից, որի ուժի մեջ մտնելու պահից մշտապես առաջանում էին խնդիրներ ոչ ավտոմատ եղանակով ծանուցումներ ուղարկելու հետ կապված, որը նկատելի էր այդ ամիսներին էլ. աճուրդի միջոցով գնումներին մասնակցող ընկերությունների մոտ՝ այդ պատճառով մեր կողմից ներկայացվող Հավելված 1 որպես ընկերության էլ. փոստ նշվում է isoroof_am@yahoo.com էլ. հասցեն:

Պատվիրատուները /գրեթե 7-8 ամիս/ մեր Ընկերությանն ուղված ծանուցումները ուղարկվում էին Հավելված 1-ում որպես ընկերության էլ. փոստ նշված isoroof_am@yahoo.com էլ. հասցեին, մինչդեռ ինչպես պարզ դարձավ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արձանագրություններից՝ Ընթացակարգի քարտուղարի կողմից ծանուցումը ուղարկվել է այն էլ. հասցեին, որը եղել է <<armeps>> էլեկտրոնային համակարգում՝ այլ ոչ թե Ընկերության կողմից Հավելված 1 որպես ընկերության էլ. փոստ նշված isoroof_am@yahoo.com էլ. հասցեին:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ Ընթացակարգի քարտուղարը պարտավոր էր առաջնորդվեր Հավելված 1 նշված էլ. հասցեից, որտեղ նշված է isoroof_am@yahoo.com և որակավորման փաստաթղթեր ներկայացնելու պահանջի վերաբերյալ ծանուցումը ուղարկեր isoroof_am@yahoo.com էլ. հասցեին:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում նաև այն հանգամանքի վրա, որ գրեթե նմանատիպ գործ քննվել է բողոքներ քննող անձ Գ.Ներսիսյանի վարույթում, որտեղ վիճարկվում էր այն հանգամանքը, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը <<Առէա Պապիրուս>> ՍՊԸ-ին համակարգի միջոցով ուղարկված ծանուցումը ուղարկել է ոչ թե Հավելված 1-ում նշված էլ. հասցեին, այլ Armeps.am համակարգում գրանցված էլ.հասցեին՝ այնուհետև պարզ էր դարձել, որ <<Առէա

Պապիրուս>> ՍՊԸ օգտանվան դիմաց համակարգում գրանցված է 2 էլ. հասցե և ծանուցումը ուղարկվել է այն էլ. հասցեին, որը Ընկերությունը երկար տարիներ չի օգտագործում: Արդյունքում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանը «Առէա Պապիրուս» ՍՊԸ-ին չի ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցկում՝ հետևյալ հիմնավորմամբ.

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Առէա Պապիրուս» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելուց հետո, Ընկերությանը Armeps.am համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ուղարկվել է Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ծանուցումը, միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ նշված ծանուցումը, համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության վերոհիշյալ գրության, ուղարկվել է <<area-kanzler>> մուտքանունով դեռևս 02.04.2019թ. ապակտիվ կարգավիճակով «Առէա Պապիրուս» ՍՊԸ-ի հասցեին, որի հետևանքով Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Առէա Պապիրուս» ՍՊԸ-ն չի ստացել վերոհիշյալ ծանուցումը:

Հաշվի առնելով վերոգրյալը, արձանագրում եմ, որ «Առէա Պապիրուս» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԳ-ԳՀԱՊՁԲ-8/2» ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում չի խախտել ստանձնած պարտավորություն, քանի կողմից սահմանված ժամկետում հրավերով նախատեսված չներկայացնելը պայմանավորված է եղել ծանուցումը չստանալու հանգամանքով:

Այսպիսով՝ Ընկերությունը թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա չեն Ընկերության գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Տվյալ պարագայում գտնում ենք, որ առկա չէ «Իզոռուֆ» ՍՊԸ-ի կողմից միտումնավոր որակավորման փաստաթղթեր չուղարկելու փաստը, քանի որ առկա է ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/28» ծածկագրով ընթացակարգի քարտուղարի անհետևողական գործողություններ, որի հետևանքով ծանուցումը ուղարկվել է համակարգում գրանցված էլ. հասցեին՝ մինչդեռ պետք է ուղարկվեր Հավելված 1-ում նշված էլ. հասցեին:

Մասնավորապես, վերը նշված փաստերը ապացուցում են, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող

հանձնաժողովի քարտուղարը ծանուցումները չի ուղարկել հայտի փաթեթ ներկայացրած «Իզոռուֆ» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1-ում նշված էլ. հասցեին, ուստի «Իզոռուֆ» ՍՊԸ-ն չէր կարող ստանալ և այնուհետև ներկացներ պահանջված փաստաթղթերը, քանի որ սահմանված ժամկետում հրավերով նախատեսված փաստաթղթերը չներկայացնելը պայմանավորված է եղել ծանուցումը չստանալու հանգամանքով:

Վերոհիշյալի պատճառով «Իզոռուֆ» ՍՊԸ-ն ոչ միայն զրկվել է Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչվելու իրավունքից և կրել ֆինանսական վնաս, այլ նաև կանգնել <<Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների>> ցուցակում ներառվելու վտանգի առաջ:

Օբյեկտիվորեն «Իզոռուֆ» ՍՊԸ-ն չէր կարող տեսնել կամ ստանալ համակարգի միջոցով ուղարկված փաստաթղթերը, քանի որ այն չի ուղարկվել Հավելված 1-ում նշված էլ. հասցեին:»:

Ելնելով վերոգրյալից՝ Բողոքներ քննող անձին խնդրել են «Իզոռուֆ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2019/115 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ՀՀ ՊՆ կարիքների համար «շինանյութերի և տնտեսական ապրանքների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ կազմակերպությունների, հայտ է ներկայացրել նաև «Իզոռուֆ» ՍՊԸ-ն:

«Իզոռուֆ» ՍՊԸ-ն, թիվ 1 հավելվածով ներկայացված դիմումում որպես Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե է նշել՝ isoroof_am@yahoo.com:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 15.05.2019թ.-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ 42-րդ չափաբաժնի մասով «Իզոռուֆ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից www.armeps.am համակարգի միջոցով «Իզոռուֆ» ՍՊԸ-ին 31.05.2019թ.-ին ուղարկված ոչ ավտոմատ ծանուցման համաձայն. *««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/28» ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտերի բացման արդյունքում Դուք հանձնաժողովի կողմից ճանաչվել եք 1-ին տեղ զբաղեցնող մասնակից՝ սույն ընթացակարգի 42-րդ չափաբաժնի մասով:*

Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը պարտավոր է սույն ծանուցումն ստանալուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, /03.06.2019թ.-05.06.2019թ./ և կարգով ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը՝ m.amiryan@mil.am էլեկտրոնային հասցեին:»:

Հանձնաժողովի 18.06.2019թ.-ին տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ 31.05.2019թ. www.armeps.am համակարգի միջոցով ծանուցվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին և առաջարկվել է հրավերով սահմանված ժամկետում և կարգով /3 աշխատանքային օրվա ընթացքում/ ներկայացնել Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը՝ m.amiryan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին: Սահմանված ժամկետում բոլոր ծանուցված մասնակիցները ուղարկել են վերը նշված փաստաթղթերը՝ բացառությամբ «ՄԷՄԱ» ՍՊԸ-ի և «Իզոռուֆ» ՍՊԸ-ի: Արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել մերժել «ՄԷՄԱ» ՍՊԸ-ի և «Իզոռուֆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված

փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.07.2019թ.-ի թիվ /26/-11399-2019 գրությամբ «Իզոռուֆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ... ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Հրավերով նախատեսված է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով

ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կարգը հաստատելու մասին» կարգի՝ 16-րդ կետի համաձայն հրավերով նախատեսվում է, որ՝

1) բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ընթացակարգով գնումների կատարման դեպքի, գնահատող հանձնաժողովի քարտուղարը՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ որակավորումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելու մասին.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը պահանջվող փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուղարկում է հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին: Քարտուղարը պարտավոր է մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերն ստանալու օրը հաստատել դրանց ստանալու հանգամանքը՝ հրավերում նշված իր էլեկտրոնային փոստից մասնակցի էլեկտրոնային փոստին հավաստում ուղարկելու միջոցով:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ Մասնակիցը պարտավոր է ապրանքների գնման դեպքում ներկայացնել՝ իր կողմից հաստատված հայտարարություն առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ:

Այն դեպքում, երբ հայտերի բացման նիստի ավարտից հետո էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցված առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ընդհանրապես չեն ներկայացվում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը, ապա տվյալ դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ՝

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.05.2019թ.-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ 42-րդ չափաբաժնի մասով «Իզոռուֆ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից www.armeps.am համակարգի միջոցով «Իզոռուֆ» ՍՊԸ-ին 31.05.2019թ.-ին ուղարկվել է ոչ ավտոմատ ծանուցում և վերջինիս առաջարկվել է ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Սահմանված ժամկետում «Իզոռուֆ» ՍՊԸ-ի կողմից չի ուղարկվել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, որի արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել «Իզոռուֆ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարություն (այսուհետ՝ Հայտարարություն): Եվ եթե

Հայտարարությունը որակվի որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնի հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Իզոռուֆ» ՍՊԸ-ն Պատվիրատուի կողմից սահմանված ժամանակահատվածում, չներկայացնելով հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթեր՝ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ինչ վերաբերում է «Իզոռուֆ» ՍՊԸ-ի կողմից նշած այն հանգամանքներին, համաձայն որոնց գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից ուղարկված էլեկտրոնային նամակը «Իզոռուֆ» ՍՊԸ-ն չի ստացել, քանի որ ծանուցումը ուղարկվել է այն էլեկտրոնային փոստի հասցեին, որը եղել է www.armeps.am էլեկտրոնային համակարգում՝ այլ ոչ թե Մասնակցի կողմից դիմումում նշված isoroof_am@yahoo.com էլեկտրոնային փոստի հասցեին, որի արդյունքում Մասնակիցը փաստացի ծանուցում չի ստացել, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ «Իզոռուֆ» ՍՊԸ-ի կողմից Բողոքներ քննող անձին չի ներկայացվել վերաբերելի որևէ ապացույց առ այն, որ www.armeps.am էլեկտրոնային համակարգում Մասնակցի կողմից դիմումում նշված isoroof_am@yahoo.com էլեկտրոնային փոստի հասցեից տարբերվող այլ էլեկտրոնային փոստի հասցե է նշված և արդյոք այն հասանելի չէ և/կամ չի օգտագործվում Մասնակցի կողմից, ընդ որում, այդպիսի հնարավորություն Ընկերությունն ունեցել է, սույն գործի քննության ընթացքում՝ մինչև որոշման կայացման պահը:

Վերոնշյալով պայմանավորված, հերքվում են «Իզոռուֆ» ՍՊԸ-ի՝ էլեկտրոնային ծանուցումը Մասնակցի կողմից մասնակցության մասին դիմումում նշված էլեկտրոնային

փոստին ուղարկելու մասին փաստարկները, քանի որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ էլեկտրոնային ձևով գնումների դեպքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում ծանուցում՝ որակավորումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելու պահանջի մասին, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կարգը հաստատելու» կարգի 16-րդ կետի դրույթները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.07.2019թ.-ի թիվ /26/-11399-2019 գրությամբ «Իզոռուֆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Իզոռուֆ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**